

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 29/3

18 հուլիսի 2015 թ.

Քննարկվեց «Ջուլի ֆարմ» ՍՊԸ 10.06.2015 թ-ի դիմում-գանգատը ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ 28.04.2015 թ-ի թիվ 6105569 ակտի դեմ:

«Ջուլի ֆարմ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ կողմից 28.04.2015 թ-ին կազմվել է թիվ 6105569 ակտը, որով «Ջուլի ֆարմ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև ընկերություն) առաջադրվել է 150.000 դրամի տուգանք:

Ընկերությունը խնդրում է չեղյալ համարել վերը նշված ակտը, քանի որ կատարվող գնումների դիմաց մշտապես դրամադրվում են բոլոր ՀԴՄ կտրոններ, իսկ այդ օրը նման գումարի և ապրանքի առևտուր նշված ժամին չի եղել:

Ըստ գանգատի, 09.04.2015 թ-ին Ընկերության տնօրենին է հանդիպել Շենգավիթի ՀՏ հարկային տեսուչ Ա.Ավագյանը և առաջարկել էստորագրել ակտը: Տնօրենը հրաժարվել է ակտը ստորագրելուց և նրա հարցին, թե ինչու պետք է ստորագրի ակտը, հնչել է պատասխան, որ 08.04.2015 թ-ին ժամը 21:00 սահմաններում ինչ-որ մի կին գնել է մանկական օճառ, որի դիմաց ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Տնօրենը չի համաձայնվել և առաջարկել է ակտ չգրել, քանի որ նման դեպք տեղի չի ունեցել:

Որոշ ժամանակ անց՝ ս.թ. մայիսի 25-ին, ընկերության տնօրենը այցելել է հարկային տեսչություն հաշվետվության բլանկներ գնելու համար և պարզել, որ ընկերության նկատմամբ առաջադրվել է ՀԴՄ-ի տուգանք: Ծանոթանալով ակտի բովանդակությանն ընկերության տնօրենը պարզել է, որ վերը նշված օճառը գնվել է ոչ թե ոմն կնոջ, այլ՝ հարկային տեսուչի կողմից: Ընկերության տնօրենը ցանկացել է պարզաբանել նշված հանգամանքը: Մասնավորապես, ստուգողներին ուղղված հարցին, թե ինչու համար է կազմվել ակտը, հնչել է պատասխան, որ նախքին ՀԴՄ տուգանքից անցել է մեկ տարի, հետևապես տարվա ընթացքում գոնե մեկ խախտման դեպք պետք է արձանագրվի:

Ելնելով վերրոգրյալից՝ ընկերությունը խնդրում է ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ 28.04.2015 թ-ի թիվ 6105569 ակտը համարել չեղյալ:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Շենգավիթի հարկային տեսչության պետի 08.04.2015 թ-ի թիվ 6105569 հանձնարարագրի համաձայն «Ջուլի ֆարմ» ՍՊԸ-ում կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ 28.04.2015 թ-ի թիվ

6105569 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ գլխավոր հարկային տեսուչ Արամ Ազարյանի կողմից 09.04.2015 թ-ին ժամը 21:05-ին ք.Երևան, Գ.Նժդեհի 19 97 հասցեում գտնվող դեղատնից կանխիկ դրամով կատարվել է 340 դրամի գնում՝ 1 հատ մանկական օճառ: Վաճառողը, որը հրաժարվել է ներկայանալ, գումարը չի մուտքագրել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրել:

Ստուգումն իրականացնող անձինք ներկայացրել են ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև, ժամը 21:13-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել Z հաշվետվություն՝ 168.690 դրամ ընդհանուր գումարով, որում կատարված վճարման գումարը ներառված չի եղել: Չմուտքագրված գումարը ժամը 21:13-ին մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն և ժամը 21:13-ին նորից դուրս է բերվել Z հաշվետվություն 169.030 դրամ ընդհանուր գումարով: Ստուգմամբ պարզվել է, որ խախտվել են ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի թիվ 846-Ն որոշման 2-րդ հավելվածով հաստատված ՀԴՄ կիրառման կարգի 23-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները, որը նույն կարգի 40-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի համաձայն հանդիսանում է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտում: Արդյունքում, համաձայն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի առաջադրվել է տուգանք՝ գումարով 150.000 դրամի չափով:

Նիստին ներկա գտնվող ընկերության նշեց, որ Ակտում նկարագրվածը չի համապատասխանում իրականությանը, այն է՝ 09.04.2015 թ-ին ժամը 21:05-ին ընկերության դեղատնից 340 դրամի մանկական օճառ չի գնվել:

Ընկերության տնօրենին Հանձնաժողովի անդամների ուղղված հարցին, թե տեսագրվում է արդյոք դեղատան վաճառատանը, և եթե այո, ապա կարող է արդյոք տրամադրվել ստուգման օրվա տեսագրությունը, հնչեց պատասխան, որ 09.04.2015 թ-ին կատարված տեսագրությունը հնարավոր է պահպանված չլինի, քանի որ տեսագրող սարքի հիշողությունը պահպանում է միայն վերջին 21 օրվա տվյալները: Այդ դեպքում, Հանձնաժողովի անդամներն առաջարկեցին ներկայացնել վերջին 21 օրյա կտրվածքով տեսագրությունները: Ընկերության տնօրենը համաձայնվել է ներկայացնել պահանջված տեսագրությունները, սակայն մի քանի օր անց հայտնել է, որ մի շարք տեխնիկական խնդիրներով պայմանավորված դրանք հնարավոր չէ ներկայացնել:

Ստուգման ընթացքում գնված օճառը, ընկերության ք.Երևան, Գ.Նժդեհի 19 97 հասցեում գտնվող դեղատնից գնված լինելու հանգամանքը պարզելու համար, ստուգող անձանց կողմից ներկայացվել է ՀՀ ՖՆ Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչություն, որտեղ կատարված քննության արդյունքում պարզվել է, որ այն իրոք գնվել է ընկերության դեղատնից:

Ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց կատարած համապատասխան գործողությունների արդյունքում ձեռք բերված ապացույցները հիմնավորում են ստուգման ընթացքում ընկերության դեղատնից գնված ապրանքի դիմաց վճարված գումարը ՀԴՄ չմուտքագրվելու և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրելու փաստը: Մասնավորապես, գլխավոր հարկային տեսուչ Արամ Ազարյանը նախ պնդեց, որ

Ակտում հիշատակված օճառի գնումը կատարվել է ոչ թե ոմն կնոջ, այլ հենց իր կողմից: Նշվեց նաև, որ գնումը կատարելուց և դրա դիմաց ՀԴՄ կտրոն չտրամադրվելուց հետո՝ ժամը 21:13-ին, ՀԴՄ-ից դուրս է բերվել Z հաշվետվություն, կատարված վճարման արժեքը մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն և կրկին անգամ դուրս է բերվել Z հաշվետվությունը:

Հարկ է նշել նաև, որ գործում առկա է ՀՀ ֆինանսների նախարարի 09.04.2015 թ-ի «Աշխատաժամանակի տևողությունը փոփոխելու մասին» թիվ 2/468-Ա հրամանը, որի համաձայն ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ պետի 08.04.2015 թ-ի թիվ 6105569 հանձնարարագրում ընդգրկված պաշտոնատար անձանց համար 2015 թ-ի ապրիլի 9-ի աշխատաժամանակի տևողությունը սահմանվել է ժամը 18:00-ից մինչև հաջորդ օրվա ժամը 02:00-ն:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ վերոգրյալ փաստական հանգամանքները հիմնավորում են ընկերության կողմից ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի թիվ 846-Ն որոշման 2-րդ հավելվածով հաստատված ՀԴՄ կիրառման կարգի 23-րդ կետի 2-րդ ենթակետի, 40-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի պահանջները խախտված լինելու հանգամանքը, որն իր հերթին առաջացնում է պատասխանատվություն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ 28.04.2015 թ-ի թիվ 6105569 ակտը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

